# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 13-ի N1 հերթական նիստի օրակարգը.

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին,
2.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի 2022 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին,
3.Արագածոտնի մարզի Ալագյազի համայնքապետարանի 2022 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին,
4.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում 2022թ. տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,
5.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին,
6.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2021 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումը հաստատելու մասին,
7.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2021 թվականի բյուջեի տարեկան կատարման ընթացքի մասին հաղորդումը հաստատելու մասին,
8.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում 2022 թվականի աղբահանությունը կազմակերպելու և աղբահանության վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,
9.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով հանրային բաց քննարկումները՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Ալագյազ համայնքի 2022 թվականի բյուջեն՝ եկամտային 184.273.600 (մեկ հարյուր ութանասունչորս միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, 94.559.100 (իննսունչորս միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ տարեսկզբի մնացորդ և ծախսային 278.832.700 (երկու հարյուր յոթանասունութ միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 3

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի 2022 թվականի վարձատրությունը սահմանել 340000 (երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 4

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով և քննարկելով Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի 2022 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵՋՈ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

Հավելված 1
ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազ
համայնքի ավագանու
13 հունվարի 2022թ. N4 որոշման

# <<ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հաստիքային միավորներ՝ 31.5
2. Աշխատակիցների թվաքանակը՝ 33

| N | Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության մասով նաև՝ ծածկագիրը) | Հաստիքների քանակը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) | լեռնային 20% | Ամսական աշխատավարձ (ՀՀ դրամ) | Ընդամենը տարեկան աշխ. Ֆոնդը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| **Քաղաքական և հայեցողական պաշտոններ** | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 340000 | 8000 | 348000 | 4176000 |
| 2 | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | 1 | 258000 | 8000 | 266000 | 3192000 |
| 3 | Համայնքի ղեկավարի երկրորդ տեղակալ | 1 | 150000 | 8000 | 158000 | 1896000 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական՝ իրավական գծով | 1 | 200000 | 8000 | 208000 | 2496000 |
| 5 | Վարչական ղեկավար / Ճարճակիս և Ռյա-Թազա բնակավայրերում | 2 | 180000 | 8000 | 376000 | 4512000 |
| 6 | Սադունց բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 170000 | 8000 | 178000 | 2136000 |
| 7 | Վարչական ղեկավար / Կանիաշիր, Սիփան և Ավշեն բնակավայրերում | 3 | 140000 | 8000 | 444000 | 5328000 |
| 8 | Վարչական ղեկավար / Ջամշլու, Շենկանի, Միրաք և Միջնատուն բնակավայրերում | 4 | 130000 | 8000 | 552000 | 6624000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 14 | 1568000 | 64000 | 2530000 | 30360000 |
| **Համայնքային ծառայության պաշտոններ** | | | | | | |
| 9 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 225000 | 8000 | 233000 | 2796000 |
| 10 | Գլխավոր մասնագետ 2-3-1 | 1 | 200000 | 8000 | 208000 | 2496000 |
| 11 | Առաջատար մասնագետ 3.1-1, 3.1-2, 3.1-3 | 3 | 150000 | 8000 | 474000 | 5688000 |
| 12 | Կրտսեր մասնագետ 3.2-1, 3.2-2, 3.2-3, 3.2-4, 3.2-5 | 5 | 100000 | 8000 | 540000 | 6480000 |
| 13 | Կրտսեր մասնագետ 3.3-1 | 1 | 92700 | 8000 | 100700 | 1208400 |
| Ընդամենը՝ | | 11 | 767700 | 40000 | 1555700 | 18668400 |
| **Ծառայություններ մատուցող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ** | | | | | | |
| 14 | Վարորդ-էլեկտրիկ | 1 | 140000 | 8000 | 148000 | 1776000 |
| 15 | Քարտուղարուհի | 0,75 | 100000 | 8000 | 83000 | 996000 |
| 16 | Հավաքարար | 1 | 89700 | 8000 | 97700 | 1172400 |
| 17 | Բանվոր | 0,75 | 92700 | 8000 | 77525 | 930300 |
| 18 | Պահակ | 0,5 | 100000 | 8000 | 58000 | 696000 |
| 19 | Պահակ 2 | 0,5 | 100000 | 8000 | 58000 | 696000 |
| 20 | Խմելու ջրագծերը կարգավորող և վերահսկող | 1 | 135000 | 8000 | 143000 | 1716000 |
| 21 | Փողոցների գիշերային լուսավորության համակարգի վերահսկող մասնագետ | 1 | 100000 | 8000 | 108000 | 1296000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 6,5 | 857400 | 64000 | 773225 | 9278700 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ՝** | | 31,5 | 3193100 | 168000 | 4858925 | 58307100 |

**Ալագյազ համայնքի ղեկավար՝ Ջասմ Մախմուդով**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածները՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

Հավելված 1
Ալագյազ համայնքի ավագանու
«13» հունվարի 2022 թվականի
N5 որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

2 ) Համայնքի վարչական տարածքում ոգելից եւ ալկոհոլային խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների եւ ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)թույլտվության համար.

**Հիմնական շենքերի եւ շինությունների համար՝**

**ա.** Մինչեւ 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաեւ մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական եւ արտադրական նշանակության շենքերի եւ շինությունների համար՝ 15000 դրամ,

սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների եւ քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդմանթույլտվություն չպահանջվող դեպքերի)թույլտվության համար՝ 1500 դրամ

Այլ դրույթների դեպքում հիմք ընդունել ՀՀ օրենքի համապատասխան կետերով:

**Տեղական վճարների դրույքաչափերը**

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

2) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

3) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

4) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

5) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով:

*ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 6

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջով, ինչպես նաև քննարկելով Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Սահմանել Արագածոտն մարզի Ալագյազի համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները հետևյալ սկզբունքով.

1.Միակողմանի ծնողազուրկ անապահով երեխաներին՝ 10.000–30.000 ՀՀ դրամ,
2.Դժբախտ պատահարներից մահացած անձանց ընտանիքներին՝ 50.000–80.000 ՀՀ դրամ,
3.Մահացած անձանց ընտանիքներին՝ 30.000-80.000 ՀՀ դրամ,
4.Զին. ծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցություն՝ 30.000–50.000 ՀՀ դրամ,
5.Զոհված զին. ծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցություն՝ 50.000–100.000 ՀՀ դրամ,
6.Սոցիալապես անապահով ընտանիքներին 10.000–30.000 ՀՀ դրամ,
7.Պատերազմի վետերաններին սոցիալական խնդիրների լուծման համար 10.000–20.000 ՀՀ դրամ,
8.1-ին կարգի հաշմանդամներին 20.000–30.000 ՀՀ դրամ,
9.Ուսումնական հաստատություններում գերազանց առաջդիմության համար 1(մեկ) լավագույն աշակերտին խրախուսման գումար 10.000–30.000 ՀՀ դրամ,
10.Ուսումնական հաստատություններում տարվա լավագույն ուսուցչի համար խրախուսման գումար 30.000–50.000 ՀՀ դրամ,
11.Բնական աղետներից տուժած անձանց դրամական օգնություն՝ կախված հասցված վնասի չափից՝ 30.000-100.000 ՀՀ դրամ,

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 7

## ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 8

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 87-րդ հոդվածի 7-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2021 թվականի տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

*Հավելված 1*
ՀՀ Արագածոտն մարզի Ալագյազ
համայնքի ավագանու
13 հունվարի 2022 թվականի N 8 որոշման

# Ալագյազ համայնքի 2021 թվականի բյուջեի տարեկան կատարողական

## *Եկամտային մաս*

Տարեսկզբի ազատ մնացորդը՝ 94559.1 հազար դրամ, որից 83498.1 հազար դրամ վարչական և 11061.0 հազար դրամ ֆոնդային

հազար դրամ

| հ/հ | Անվանումը | Հաշվարկային | Փաստացի | % |
|---|---|---|---|---|
| 1 | Անշարժ գույքի հարկ | **21065.0** | 22401.8 | **106,3** |
| 2 | Հողի վարձավճար | **8200.0** | 8029.0 | **97,9** |
| 3 | Տեղական տուրք | **896.0** | 912.7 | **101,9** |
| 4 | տեղական վճար | **200.0** | 908.5 | **454,3** |
| 5 | Աղբահանություն | **1620.0** | 1620.0 | **100,0** |
| 6 | Դոտացիա | **135700.0** | 135727.8 | **100,0** |
| 7 | Փոխադրամիջոց | **9800.0** | 9460.2 | **96,5** |
| 8 | Ոչ գյուղ նշանա. հողերի վարձա. | **1380.0** | 1155.0 | **83,7** |
| 9 | Սուբվենցիաներ | **87115.7** | 87115.7 | **100,0** |
| 10 | Գույքի օտարում | **0** | 288,4 | **100** |
| 11 | *Ընդամենը* | **265976,7** | **267619,1** | 100.6 |

## *Ծախսային մաս*

| N | Հոդված | Անվանումը | Հաշվարկային | Փաստացի | % |
|---|---|---|---|---|---|
| 1 | 4111 | Աշխատողների աշխատավարձ | **55000,0** | **43830,9** | **79,7** |
| 2 | 4112 | Պարգևատրումներ | **9100,0** | **6731,5** | **74,0** |
| 3 | 4211 | Գործառնական և բանկային ծառայություն | **500,0** | **0** | **0,0** |
| 4 | 4212 | Էներգետիկ ծառայություն | **5500,0** | **4916,2** | **89,4** |
| 5 | 4213 | Կոմունալ ծառայություն | **2620,0** | **114,0** | **4,4** |
| 6 | 4214 | Կապի ծառայություններ | **800,0** | **120,0** | **15,0** |
| 7 | 4215 | Ապահովագրական ծախսեր | **100,0** | **0** | **0,0** |
| 8 | 4216 | Գույքի և սարքավորումների վարձակալություն | **2800,0** | **0** | **0,0** |
| 9 | 4221 | Ներքին գործողումներ | **700,0** | **0** | **0,0** |
| 10 | 4232 | Համակարգչային ծառայութնուն | **1500,0** | **0** | **0,0** |
| 11 | 4234 | Տեղեկատվական ծառայություն | **500,0** | **64,4** | **12,9** |
| 12 | 4235 | Կառավարչական ծառայություն | **2000,0** | **0** | **0,0** |
| 13 | 4236 | Կենցաղային և հանրային սննդի | **800,0** | **0** | **0,0** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ծառայություններ | | | |
| 14 | 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություն | 6000,0 | 1783,0 | 29,7 |
| 15 | 4241 | Մասնագիտական ծառայություն | 1500,0 | 414,0 | 27,6 |
| 16 | 4251 | Շենքերի և կառույցների ընթացիք նորոգում և պահպանում | 27380,0 | 755,4 | 2,8 |
| 17 | 4252 | Մեքենաների և սարքավորումների ընթացիք նորոգում և պահպանում | 1500,0 | 330,5 | 22,0 |
| 18 | 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 2000,0 | 490,5 | 24,5 |
| 19 | 4264 | Տրանսպորտային նյութեր | 2000,0 | 125,5 | 6,3 |
| 20 | 4267 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 1000,0 | 40,3 | 4,0 |
| 21 | 4269 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 12561,0 | 782,3 | 6,2 |
| 22 | 4637 | Ընթացիք դրամաշնորհներ | 436,0 | 0 | 0,0 |
| 23 | 4657 | Այլ կապիտալ դրամաշնորհներ | 4564,0 | 4563,5 | 100,0 |
| 24 | 4727 | Կրթություն, մշակույթ և սպորտ նպաստներ բյուջեից | 1000,0 | 0 | 0,0 |
| 25 | 4729 | Այլ նպաստներ բյուջեից | 5000,0 | 970,0 | 19,4 |
| 26 | 4819 | Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 1000,0 | 0 | 0,0 |
| 27 | 4822 | Այլ հարկեր | 500,0 | 296,9 | 59,4 |
| 28 | 4823 | Պարտադիր վճարներ | 500,0 | 444,9 | 89,0 |
| 29 | 5112 | Շենք շինությունների կառուցում | 225862,6 | 216456,4 | 95,8 |
| 30 | 5134 | Նախագծահետազոտական ծախսեր | 3526,9 | 2160,5 | 61,3 |
| 31 | | Ընդամենը | 378250,5 | 285390,7 | 75.5 |

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 9

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 20-րդ կետերով, 88-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետով և 14-րդ հոդվածով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Սահմանել Արագածոտն մարզի Ալագյազ համայնքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարի 2022 թվականի համար հետևյալ դրույքաչափերը

1)Կենցաղային աղբի համար փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50 դրամ:
2)Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 դրամ:
3)Առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 60 դրամ:
4)Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 30 դրամ:
5)Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ:
6)կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 5 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՔԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyazhp@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 10

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզպետի 2022 թվկանաի հունվարի 3-ի N 01 /5/00014-2022 գրությունը, Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի Ալագյազ, Ավշեն, Կանիաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Ռյա Թազա, Սադունց և Սիփան բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՇԱՔՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ**